



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

---

**ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Քաղ. Երեւան**

**6 հուլիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1  
դատական կազմը՝

Նախագահությանք՝ Կ. Բալայանի

Անդամակցությանք՝ Վ. Յովիաննիսյանի

Վ. Պողոսյանի

Քննության առնելով «Հանրապետություն» կուսակցության եւ Արտակ Զեյնայանի  
դիմումի ընդունելիության հարցը,

**ՊԱՐՁԵՑ.**

1. Արտակ Զեյնայանը եւ «Հանրապետություն» կուսակցությունը 22.06.2010թ. դիմել  
են ՀՀ սահմանադրական դատարան:

2. Դիմողները ՀՅ սահմանադրական դատարան ներկայացրած իրենց դիմումում խնդրել են.

«1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ և 43-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության 2007 թվականի դեկտեմբերի 7-ի «Վարչական դատավարության» ՀՕ-269-Ն օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19-րդ կամ 1-ին, 3, 6 և 43-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության 2007 թվականի դեկտեմբերի 7-ի «Վարչական դատավարության» ՀՕ-269-Ն օրենսգրքի 64-րդ հոդվածի դրույթները:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19-րդ կամ 1-ին, 3, 6 և 43-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության 2007 թվականի դեկտեմբերի 7-ի «Վարչական դատավարության» ՀՕ-269-Ն օրենսգրքի 65-րդ հոդվածի դրույթները:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19-րդ կամ 1-ին, 3, 6 և 43-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության 2007 թվականի դեկտեմբերի 7-ի «Վարչական դատավարության» ՀՕ-269-Ն օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթները:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19-րդ կամ 1-ին, 3, 6 և 43-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության 2007 թվականի դեկտեմբերի 7-ի «Վարչական դատավարության» ՀՕ-269-Ն օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ ենթակետի դրույթները»:

Դիմողների կողմից առաջ քաշված փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին՝

Վարչական ակտի բողոքարկման օրենսդրական ընթացակարգերով պետք է լիարժեք պաշտպանելի լինեն անձանց հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերը, այդ թվում՝ քաղաքական իրավունքներն ու ազատությունները, խորականությունից գերծ լինելու իրավունքը, պետական մարմինների առջև

իրավունքների ու ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Դիմողների կարծիքով՝ վերը թվարկվածները բավարար չափով երաշխավորված չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ իրենց կողմից վիճարկվող դրույթներում, ինչը հանգեցրել է իրենց՝ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտմանը:

3. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Դիմումը կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը.

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններուն դատավարության մասնակից,
- որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է վիճարկվող օրենքի դրույթը,
- որի նկատմամբ վիճարկվող օրենքի դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,
- որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար

իրավասու սուբյեկտ չէ: Տվյալ գործի փաստական հանգամանքների վերլուծությունը վկայում է, որ Ա. Զեյնալյանն ընդհանուր իրավասության դատարաններում հանդես է եկել «Հանրապետություն» կուսակցության շահերի պաշտպանությամբ: Այս համատեքստում սահմանադրական «կոնկրետ վերահսկողության» նպատակն է ապահովել անձի սահմանադրական իրավունքների պաշտպանությունը, երբ դրանք խախտվել են արդարադատության իրականացման գործընթացում հակասահմանադրական նորմի կիրառման արդյունքում: Այս պարագայում սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտումը վերաբերում է «Հանրապետություն» կուսակցությանը, իսկ Ա. Զեյնալյանն ընդամենը վերջինիս կենտրոնական գրասենյակի աշխատակազմի ղեկավարն է: Հետևաբար՝ տվյալ գործով Ա. Զեյնալյանը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Ինչ վերաբերում է «Հանրապետություն» կուսակցության մասով գործի քննությանը, ապա, քանի որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ հոդվածներում նախատեսված են իրավասու սուբյեկտների կողմից սահմանադրական դատարան հասցեագրված դիմումներին ներկայացվող միասնական ընդհանուր ձևական պահանջներ, իսկ որպես անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման նույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ, այսինքն՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով:

Այսինքն՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի իրացման հարցում օրենսդիրն անձին, ի թիվս ձևական պահանջների, առաջադրել է նաև իրավավերլուծական բնույթի բովանդակային հիմնավորումներ ներկայացմելու պարտականություն: Դիմումի հիմքում պետք է դրվեն սահմանադրականության վերաբերյալ անձի փաստարկները հիմնավորող իրավական բնույթի հանգամանքներ, իրավագիտական (տեսական կամ իրավակիրառական նշանակության) եզրահանգումներ:

Դիմողին ներկայացվող այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով հիմնավորել, թե իր որ սահմանադրական իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող դրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Ինչպես վկայում է դիմումի

ուսումնասիրությունը, դիմողն իրավաբանորեն չի հիմնավորել, թե իր որ սահմանադրական իրավունքներն են խախտվել խնդրո առարկա դրույթով, ինչպես նաև ներկայացված չէ անմիջական պատճառահետևանքային կապը վիճարկվող դրույթի և դիմողի իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև։ Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել, որ եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դեպքում դիմումն ակնհայտ անհիմն է։

Անհրաժեշտ է նաեւ նշել, որ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց։ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ։

Վերոշարադրյալ վերլուծությունից պարզ դարձավ, որ՝

- Դիմողներից Ա. Զեյնայանը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ,
- դիմումն ակնհայտ անհիմն է,
- դիմողները բարձրացրել են վիճարկվող դրույթների կիրառման իրավաչափության հարց։

Բացի դրանից, «Հանրապետություն» կուսակցության կողմից վերոնշյալ դրույթների վիճարկումը բխում է վերացական վերահսկողության էությունից և հետապնդած նպատակներից։

Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ

հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

## ՈՐՈՇԵՑ.

«Հանրապետություն» կուսակցության եւ Արտակ Զեյնալյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող

Անդամներ



6 հուլիսի 2010 թվականի  
ՍԴԿՈ/1-18